

**ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 13/4**  
**2 մարտի 2018թ.**

Քննարկվեց Ա/Ձ Մայրամ Վարդանյանի բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 09.01.2018թ. N2140631 ակտի դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 13.12.2017թ. N2140631 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Մայրամ Վարդանյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենանրի կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 09.01.2018թ. N2140631 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ):

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ընկերության կողմից Ակտը վերադասության կարգով բողոքարկվելուց բացի, նշված ակտի դեմ հայցադիմում է ներկայացվել նաև ՀՀ վարչական դատարան:

ՀՀ վարչական դատարանի 30.01.2018թ. որոշման համաձայն (վարչական գործ թիվ ՎԴ/0718/05/18) Ա/Ձ Մայրամ Վարդանյանի հայցադիմումն ընդդեմ ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 09.01.2018թ. N2140631 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի՝ դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ:

Նույն օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Մայրամ Վարդանյանի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 443-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

Ա/Ձ Մայրամ Վարդանյանի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**